Շենաթաղ

Բնակչություն՝ 390

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 139 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 35 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1760 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Գյուղը կրել է նաև Սաստան, իսկ մինչև 1990 թվականը՝ Լեռնաշեն անվանումները Ղևոնդ Ալիշանի մոտ օգտագործվում է Շինաթաղ տարբերակը: Գյուղի մասին շատ լեգենդներ են պահպանվել: Ե.Լալայանը նշում է, որ եթե կենտրոնից մարդ էր գալիս, գյուղացիները հագնում էին մուշտակներ, որպեսզի ցուցադրեին իրենց կարծեցյալ շքեղությունը: Գյուղի շրջակայքում են կառուցվել Տատան և Սագու ամրոցները: Գյուղի կենտրոնում պահպանվել է սբ. Մարտիրոս եկեղեցին՝ կառուցված 1704 թվականին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Գյուղատնտեսությամբ զբաղվում է 146 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 501 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 964 գլուխ,
- խոզեր՝ 13 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 470:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 7404 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6998 հա, որից՝
- վարելահող՝ 143 հա, խոտհարք՝ 69 հա, արոտ՝ 3694 հա, այլ հողատեսք՝3092 հա
- բնակավայրերի հողեր՝ 32 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 5 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝7 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 209 հա,
- անտառային հողեր՝ 134 հա, որից անտառածածկ՝134 հա
- ջրային հողեր՝ 20 հա